**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2023 թվականի դեկտեմբերի 13-18-ը շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լևոն Ազիզյանի Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև) գործուղման արդյունքների վերաբերյալ**

**1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Լևոն Ազիզյան, Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

**2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև), 2023 թվականի դեկտեմբերի 13-18-ը:

**3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն /այսուհետ՝ ՀՕԿ/

**4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության ներքո ՀՕԿ կողմից կազմակերպված Հարավային Կովկասի երկրների (Հայաստան, Ադրբեջան և Վրաստան) և Ղազախստանի ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների տնօրենների և ներկայացուցիչների հանդիպմանը, որի նպատակն էր՝

- ✓ ենթատարածաշրջանում «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության շրջանակներում դիտարկումների, մոնիթորինգի և կանխատեսման վերաբերյալ բացերի բացահայտումը,
- ✓ Հարավային Կովկասի տարածաշրջանում բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման համակարգերի (MHEWs) ներդրման մարտահրավերների ու հնարավորությունների քննարկումը, ներառյալ՝ Կենտրոնական Ասիայի և

Հարավային Կովկասի համար առաջարկվող Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման խորհրդատվական համակարգը (CASC-MHEWS),

- «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության ներքո հետագա գործունեության պլանավորումը:

## 5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Ներկայացված է 6-րդ կետի ներքո:

## 6.ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպման ընթացքում կարևորվեց «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության վերաբերյալ համագործակցության պատրաստակամությունը՝ հաշվի առնելով, որ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Ղազախստանը բախվում են նմանատիպ մարտահրավերների, ինչը կարևոր է վաղ նախազգուշացման համակարգերի ծառայությունների բարելավման ընթացակարգերի մշակման հարցում:

**2023 թվական դեկտեմբերի 14**

- «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության ներկայացում. ՀՕԿ-ի և ՄԱԿ-ի այլ գործակալությունների կողմից ներկայացված կարևորագույն նախաձեռնություն է, որի նպատակն է երաշխավորել Երկրի վրա յուրաքանչյուրի պաշտպանվածությունը եղանակային, ջրային կամ կլիմայական վտանգավոր իրադարձություններից՝ կյանքեր փրկող վաղ նախազգուշացման համակարգերի կիրառման միջոցով:
- Մասնակից երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Ղազախստանի ներկայացուցիչների կողմից Ազգային վաղ նախազգուշացման համակարգերի ընթացիկ իրավիճակի ներկայացում: Մեկ անգամ ևս կարևորվեց, որ տարածաշրջանային համագործակցության ամրապնդումը կարող է էական առավելություններ ապահովել ազգային վաղ նախազգուշացման

ծառայությունների բացերը վերացնելու հարցում, մասնավորապես՝ անդրսահմանային վտանգների հետ կապված: Վաղ նախազգուշացման ծառայությունների զարգացման տարածաշրջանային մոտեցումը կարող է հանգեցնել շոշափելի օգուտների, այդ թվում՝ ռեսուրսների միավորման արդյունքում ծախսերի խնայողությանը, գիտելիքների և փորձի փոխանակման հմտության, ինչպես նաև անդրսահմանային վտանգներին պատշաճ կերպով արձագանքելու կարողությունների ձեռքբերմանը:

- «Վաղ նախազգուշացում բոլորի համար» արագ գնահատման արդյունքների ներկայացում: ՀՕԿ-ի Տարածաշրջանային ասոցիացիա VI-ի (Եվրոպա) կառավարման խումբը հաստատել է 10 առաջնահերթ երկրների ցանկը, որոնց համար կկիրառվեն արագ գնահատման մեխանիզմներ 2023 թվականի վերջին կամ 2024 թվականի սկզբին: Վերջերս «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության շրջանակներում ՀՕԿ կողմից իրականացվել է վաղ նախազգուշացման կարողությունների արագ գնահատում Հայաստանի և Վրաստանի համար: Արդյունքների համաձայն, կան որոշակի բացեր. ծառայությունների մշակման հարցում ընդհանուր կարիքներից հատկանշական են հետևյալները.

- ✓ Դիտարկումների տվյալների հասանելիության ապահովում՝ առաջնահերթ վտանգները համապատասխան տեղանքային և ժամանակային լուծաչափերով վերահսկելու համար,
- ✓ Առաջնահերթ վտանգների (մասնավորապես հեղեղումների) կանխատեսման մոդելավորման համակարգերի կատարելագործում,
- ✓ Տարածաշրջանային համագործակցության բարելավում, մասնավորապես՝ կապված անդրսահմանային վտանգների հետ,
- ✓ Ազդեցության վրա հիմնված կանխատեսումների ծառայությունների առկայություն,
- ✓ Փորձագետների վերապատրաստում վաղ նախազգուշացման ծառայությունների մատուցման առաջադեմ մեթոդների վերաբերյալ:

- Դիտարկումների և մոնիթորինգի վերաբերյալ ՀՕԿ-ի գործունեության իրականացման մասով (GBON, WIGOS, WIS, WHOS, որոնք աջակցում են վաղ նախազգուշացման համակարգերին) քննարկումներ:
- Տարածաշրջանային տվյալների փոխանակության, ինչպես նաև տվյալների փոխանակման հաջող օրինակների ներկայացում:
- Տարածաշրջանում տվյալների հնարավոր փոխանակման վերաբերյալ քննարկում: Երկրները կարևորեցին տվյալների փոխանակումը, ինչպես նաև մեկ անգամ ևս ընդգծվեց, որ հիդրոլոգիական և ռադարային տվյալների փոխանակումն առանձնահատուկ նշանակություն ունի: Այս տվյալները կարևոր են, օրինակ, անդրսահմանային տարածքներում հեղեղումների և ուժեղ տեղումների կանխատեսման համար: Արդյունքում Ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների ներկայացուցիչները խնդրանքով դիմեցին ՀՕԿ-ին հարցաշար մշակելու համար, ինչի միջոցով կհստակեցվի, թե ինչպիսի փոխանակման տվյալներ պետք է ունենան երկրները, և թե որոնք են նպատակահարմար փոխանակման համար: Կարևորվեց տվյալների փոխանակման վերաբերյալ քննարկումների շարունակականության անհրաժեշտությունը՝ ներառյալ հնարավոր համաձայնագրերի և տվյալների փոխանակման մեխանիզմների գործարկման խնդիրները: Տվյալների փոխանակման շրջանակը (օրինակ՝ ինչ տեսակի տվյալներ) և այն, թե որ հաստատությունները պետք է ներգրավվեն այդ գործընթացում, հետագա քննարկման առարկաներ են:
- Առաջնահերթ վտանգների կանխատեսման և նախազգուշացման վերաբերյալ քննարկումներ: Մասնավորապես ներկայացվեցին հեղեղումների կանխատեսմանն աջակցելու ՀՕԿ-ի գործունեությունը, ՀՕԿ-ի մշակման և կանխատեսման ինտեգրված համակարգի (WIPPS) բովանդակությունը և Ֆինլանդիայում Հեղեղումների օպերատիվ կանխատեսումները և նախազգուշացումները:
- Վաղ նախազգուշացման համակարգերի զարգացման համար ռեսուրսների մոբիլիզացիայի հնարավորությունների վերաբերյալ քննարկում:

**<u>2023 թվականի դեկտեմբերի 15</u>**

- Ներկայացվեց ՀՕԿ-ի Տարածաշրջանային ասոցիացիա VI-ի «Վաղ նախազգուշացում բոլորի համար» գործողությունների ծրագիրը:
- Ներկայացումներ եղան արդեն իսկ գործող տարածաշրջանային համագործակցությունների արդյունքում ձևավորված «Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման համակարգերի» վերաբերյալ (որպես հաջող օրինակներ)՝ ներկայացնելով առկա դժվարությունները և առավելությունները:
- Քննարկումներ Հարավային Կովկասում և Ղազախստանում «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության իրականացման համար հաջորդ քայլերը պլանավորելու վերաբերյալ:
- Մասնակցություն Շվեյցարիայի Համադաշնությունում Ֆինլանդիայի մշտական ներկայացուցչության կողմից հանդիպման մասնակից երկրների՝ Շվեյցարիայի Համադաշնությունում մշտական ներկայացուցչությունների և ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների համար հրավիրված հանդիպմանը՝ տարածաշրջանում վաղ նախազգուշացման համակարգերի հնարավոր զարգացման և աջակցության վերաբերյալ:

Համաժողովի ընթացքում տեղի են ունեցել նաև մի շարք ***երկկողմանի հանդիպումներ***՝

- ՀՕԿ գլխավոր քարտուղար Պետտերի Տաալասի հետ: Վերջինիս՝ 2024թվականի հունվարից Ֆինլանդիայի ազգային հիդրոօդերևութաբանական ծառայության տնօրեն դառնալու հանգամանքով պայմանավորված համաձայնություն է ձեռք բերվել խորացնել համագործակցությունը 2 կառույցների միջև: Ֆինլանդական կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցել Հայաստանին վաղ նախազգուշացման համակարգերի զարգացման և կարողությունների բարելավման ուղղությամբ:
- ՀՕԿ-ի Ռեսուրսների մոբիլիզացման և զարգացման գործընկերության տնօրեն Դանիել Կուլի և ՀՕԿ-ի ծառայությունների և զարգացման բաժնի պետ Ֆիլիպ

Լուսիոյի հետ: Վերջիններիս հետ քննարկվել են ՀՕԿ աջակցությամբ հիդրոօդերևութաբանական և կլիմայական ծառայությունների կարողությունների զարգացմանն ու արդիականացման ուղղված հարցեր, ինչպես նաև ՀՕԿ աջակցությունը ծրագրերի մշակման գործընթացում:

- ՀՕԿ-ի տարբեր բաժինների ներկայացուցիչների, մասնավորապես՝ ՀՕԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Կոռնելիա Ռադիկսի և գրասենյակի գիտական և գլխավոր համակարգողների հետ:
- Ֆինլանդիայի Արտաքին գործերի նախարարության Ջրի հարցերով հատուկ բանագնաց Անտի Ռաուտավարայի հետ:
- Ֆինլանդիայի Օդերևութաբանական ինստիտուտի խորհրդատվական ծառայությունների բաժնի պետ Հարրի Պիետարիլայի հետ:
- Ղազախստանի ազգային հիդրոօդերևութաբանական ծառայության տնօրեն և ՀՕԿ-ում Ղազախստանի մշտական ներկայացուցիչ Դանարա Ալիմբաևայի հետ: Վերջինիս հետ քննարկվեցին երկու երկրների միջև վաղ նախազգուշացման համակարգերի զարգացման ոլորտում հնարավոր համագործակցության, ինչպես նաև վտանգների ու ռիսկերի երկրաբանական և հիդրոօդերևութաբանական գնահատման արդի մեթոդաբանության փորձի փոխանակման հնարավորությանը վերաբերող հարցեր:

## 7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ամփոփիչ քննարկման ժամանակ ***որոշվեց***՝

- Կազմել հարցաթերթիկներ՝ տվյալների հնարավոր փոխանակման և համապատասխան մակարդակներում անցկացվելիք հետագա քննարկումների վերաբերյալ,
- կազմակերպել քննարկումներ տարածաշրջանային վաղ նախազգուշացման համակարգերի զարգացման տարածաշրջանային մոտեցման շուրջ,

- հետագայում ևս շարունակել քննարկումները տարածաշրջանային վաղ նախազգուշացման համակարգերի զարգացման վերաբերյալ՝ սահմանելով անհրաժեշտ ռեսուրսներն ու առաջնահերթությունները,
- առավելագույնս օգտագործել գոյություն ունեցող նախաձեռնությունները, ինչպիսիք են Հարավարևելյան Եվրոպայի Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման խորհրդատվական համակարգը և համաեվրոպական ծրագրերը,
- մշակել աջակցության մեխանիզմներ՝ ազգային վաղ նախազգուշացման համակարգերի զարգացման համար (մասնավորապես Վրաստանում և Հայաստանում):

## 8. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎ

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Լևոն Ազիզյան

21.12.2023թ.